



ՎԵՂՎԵՔԵՆԵՍ ՏԵՄԻԱԲԻԴԵ

Վիճագ, 28 Նոյեմբեր, 1890:

Ամույս 23ին Հոլանտայի Օրլանստան տան վերջին արու պայագատը Գուլիելմուս Գ 73 տարուան թագաւորը միուս Լայի դղեկին մէջ: Գուլիելմուս Գ, որ էր միանգամայն Արքեղոս Լուքսեմպուրկի, ծնած էր 1817 Փետրուար 19ին, եւ զա՛հ ելած 1849ին: Նախ ամուսնացած էր Վիլհելմէնէրի Գուլիելմուս թագաւորին Սոփիա դստեր հետ (1839, Յունիս 18), ըսյց թէ թագաւորին եւ թէ այս ամուսնութենէն ծնած երկու թագաժառանգ Գուլիելմուս եւ Ադերսանդր իշխանները վաղահաս մեռնելով երկրորդ անգամ ամուսնացաւ թագաւորը 1879 Յունուար 7ին Վալտէրի Գեորգ իշխանին Էմմա դստեր հետ, որով ծնաւ 1880 Օգոստոս 31ին իւր միմիակ դուստը Գուլիելմին, որ ըստ հռչակաւորանի (1848ի) օրինաց է թագին ժառանգը. ըսյց առ այժմ՝ իւր անշարհաստիկեան ժամանակ խնամակալութիւնն առաւ իւր մայրը՝ Էմմա թագուհին:

Լուքսեմպուրկի արքեղքսութեան մէջ, որ Հոլանտայի հետ միայն թագաւորին անձնօրն կապուած էր, կը զօրէ Սալան օրէնքը, որով պայագատութեան անատակ կըլլայ իսական զիծը. այժմ՝ այս երկրին վարչութիւնն անցաւ ժառանգութեամբ Նասաուի Ատուլփոս Արքեղքին: Ատուլփոս՝ Նասաուի դուքսը, ծնած է 1817 Յուլիս 14ին, եւ 1844ին ամուսնացած է Ռուսսաւանի Միքայէլ աւագիշխանի Եղիսարեմի դստեր հետ, որ տարի մը վերջը միուս, եւ դուքսը կրկին ամուսնացաւ 1851 Ապրիլ 23ին Անայալ-Տեսաուի Փրեդերիկոս իշխանին Ատեմայտ դստեր հետ: Դուքսը 1866 Յունիս 14ին Աշաֆենպուրի Ճակատէն ետըը թողուցած էր իւր գահակաւոր քաղաքն եւ ցայժմ՝ Վիեննա կը բնակէր: Կը կարծուի՝ թէ Նասաուի ժառանգ Յնամիայ Գուլիելմուս իշխանին հետ պիտի ամուսնանայ մանուկ թագուհին, որով Նասաուի տանը ծնօք Լուք-

սեմպուրկ դարձնալ անրաժին եղանակաւ կը կապուի Հոլանտայի հետ:

Նոյեմբերի սկիզբները՝ Ռուսաստանի թագաժառանգ իշխանն իւր արևելքը բրած ժամօրդութեան առնն Վիեննա եկաւ իբրեւ հիւր Աւստրիոյ կայսեր. այս ղէպն առնուեցաւ իբրեւ նշան երկու իշխող տանց մտերմական յարաբերութեանց:

Գերմանիոյ Պաշտօնէից զահերէցն Գարրիկի Խոտախ երթալով տնտեսութիւն մ'ունեցաւ Քրիստիի հետ. տնտեսութեան գլխաւոր նպատակն առնուողական էր:

Փորթուկալի եւ Անգլիոյ ափրիկեան դաշնադրութեան առթիւ եղած գժտութիւնն առ այժմ՝ դադրեցաւ առժամանակեայ (վեց ամիս տուող) դաշնադրութեամբ, որով հիմ՝ դրուեցաւ նոր վերջնական դաշնադրութեան մը:



ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

- ՌՈՒՄԻՆԵՆԴԱՆ**
 ՊԱՏՄԱՐԱՆԱԿԱՆ — Պատմական արժէք Ազաթան-գետայ. 273:
 ՊԱՏՄԱՐԱՆ — Տիգրանի եւ Պէգման. 276:
 ՏԵՂԱՐԱՆԱԿԱՆ — Տօրիկի վրան եւ չուրք. 280:
 ՂԵՋՈՒՄԱՐԱՆԱԿԱՆ — Հայկականք Զ. 283:
 ՄԱՏԵՐԱՌՈՍԱԿԱՆ — Հարկեարի քնարը. 285: — Պատմութիւն Օսմանեան պետութեան. 287: — Քրանսերէն լեզու. 288:
 ԱՋԳԱՐԱՆԱԿԱՆ — Ազգային ժողովրդական առանձնը Տրապիզոնի կեանքէն քաղուած. 289:
ԱՐՈՒՆԵՍԻՆԵՆԴԱՆ
 ԲԺՇԿԱԿԱՆ — Փր. Ռ. Քոն եւ իւր այտուցարդի գիւտ. 290: (Պատկերաւ):
 ԱՌԻԻՏԻՏԻՆԱԿԱՆ — Ռուսիոյ արտաձոնութիւնը տարւոյս առաջին վեցամեակին. 295:
 ԱՐՈՒՆԵՆԴԱՆ — Արուստիք զարգացման արգելքներն ի Տաճկաստան. 296:
 ՏԵՏԵՆԱԿԱՆ — Բերքի եւ ատամանք խնամքը. 296:
ՕՏԼԵՆԵՆԴ
 ՆՈՐԱՆՈՒՐ — Ժալիկ անձրեւնոց. 298: — Մաքսուցոյ մը նոր գիւտը. 299:
 ՏԵՏԵՆԱԿԱՆ — Փայտն որդնարարութիւնը պահպանելու միջոց. 299: — Մագնետի խնամքը. 299:
 ՄԱՐԱՆԱԿԱՆ — Անգլիոյ Յոքսեանք. 299: — Մաքսու. 299:
ԲԱՂԵՔԱԿԱՆ ՏԵՄԻԱԲԻԴԵ 300:



ՀՐԱՏԱՐԱՆԱԿ ԵՒ ՊԱՏՄԱՐԱՆԱՑՈՒ ՆՍՐԱՊԻՍԻ
Է. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆԶ
 ՎԻԵՆԱ — ՄԻԹԻՐԻԵՆԵ ՑՊԱՐԱՆ